

Հ Բ Ա Մ Ա Ն

ԱՌՐԻԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՈՒ

ԼՈՒՍԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

№ 438, 15-ին ՀՈՒՏԵՄԲԵՐԻ 1940 Թ.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈԶ-ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՎ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԲԱՐԵՂԱՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

373

Վ - 21

373

Q-21

51.202

01. 2013

8074


0120-10

Հ Ի Ե Մ Ե Ն

**ԱԴՐԻԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԼՈՒՍԱՎՈ-
ՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ**
№ 438, 15-ին ՀՈՎՏԵՍՐԵՐԻ 1940 թ.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈԶ-ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՎ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱ-
ՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Сдано в производство 6/XI 40 г.
Подписан и печати: 21/XII 40 г.
Колич печатных знаков 18,096
Колич печатн. листов 1/2
Учетн. издательск. л. 0,45



2397
4

ФГ 14151 ст. 364 А—6. Тип. „III Интернацио-
нал“ Баку, ул. Саратоца-Ефимова, 29
Заказ № 3492. Тираж 500 экз.

Գյուղական դպրոցի աշխատանքը վերջին տարիների ընթացքում զգալիորեն բարելավվել է: Աշակերտների գիտելիքներն ավելի սիստեմատիկ և կայուն են դարձել: Առաջավոր դպրոցները, արտադասարանական աշխատանքի կարգով, ապահովում են աշակերտների որոշ պատրաստությունը գյուղական տնտեսության գծով: Այդ մասին է վկայում այն հանդամանքը, որ Ադրբեջանական ՍՍՌ գյուղական դպրոցների 616 աշակերտ 1940 թվականին գյուղական տնտեսության գծով փորձնական

աշխատանքի համար դրանցվել են Համա-
միութենական Գյուղատնտեսական Յու-
ցահանդեսի պատվոգրքում:

Իրա հետ միասին գյուղական դպրոցի
կրթական և դաստիարակչական աշխատան-
քը չափազանց թույլ է այն տեսակետից,
որ նա կտրված է սոցիալիստական տնտե-
սության պրակտիկայի կենսական հարցե-
րից: Գյուղական դպրոցն աշակերտներին
վատ է ծանոթացնում գյուղատնտեսական
բույսերի եվ կենդանիների բիոլոգիայի, ագ-
րոնոմիայի գիտական հիմունքների, գյու-
ղական տնտեսության մեխանիզացիայի ու
քիմիզացիայի, կոլխոզային հաշվառման,
հողի շահալին աշխատանքների հետ և այ-
լրն:

Դպրոցն իր աշխատանքի մեջ պատշաճ
չափով չի օգտագործում առանձնապես իր
նայոնի, ռեսպուբլիկայի գյուղական տնտե-
սության առաջավորների եվ նովատորների
նվաճումները, ՍՍՌՄ գյուղական տնտեսու-
թյան նվաճումները, որ ցույց են տրվել
Համամիութենական Գյուղատնտեսական
Յուցահանդեսում:

Գյուղական դպրոցի կրթական և դաստի-
արակչական աշխատանքի այդպիսի կտրը-

վածությունը սոցիալիստական գյուղական
տնտեսության պրակտիկայից՝ հակասում է
ՀամԿ(Բ)Պ 18-րդ համագումարում ընկեր
Մոլոտովի արած ցուցումներին այն մասին,
որ «Միջնակարգ դպրոցն ավարտող և շատ
ղեպքերում այս կամ այն գործնական աշ-
խատանքին անցնող պատանիների և աղ-
ջիկների հսկայական քանակության ներկա-
յությունը հարց է առաջանում, որպեսզի
միջնակարգ դպրոցն ավարտելուց առաջ նը-
րանք արդեն թեկուզ որոշ պատրաստու-
թյուն ստանան ապագա գործնական աշ-
խատանքի համար»:

Վերոհիշյալ թերությունները գյուղական
դպրոցի աշխատանքում բացատրվում են հե-
տեվյալ հիմնական պատճառներով. միջնա-
կարգ դպրոցի ծրագրերում եվ դասագրքե-
րում այնպիսի նյութի անբավականաչափու-
թյամբ, որն աշակերտներին ծանոթացնում
է սոցիալիստական գյուղական տնտեսու-
թյան գիտական հիմունքների հետ, ծրագրե-
րում և դասագրքերում երկրագիտական նյու-
թի բացակայությամբ (բամբակ, մերձարե-
վադարձային և այլ տեխնիկական կուլտու-
րաներ), տառցիչներին գյուղական տնտե-
սության դժով, մասնավորապես Համամիու-

Թենական Գյուղատնտեսական Ցուցահան-
դեսի վերաբերյալ գրականություն մատա-
կարարելու անբավարարությունները. դպրոցնե-
րում բնորոգիական կարիներատների ու դըպ-
րոցամերձ հողամասերի բացակայությունները.
աշակերտների համար գյուղական տնտե-
սության դժով գրականության բացակայու-
թյամբ. բիոլոգիական և ֆիզիկո-մաթեմա-
տիկական ցիկլի առարկաների դասավանդ-
ման՝ մեթոդական տեսակետից չափազանց
ցածր մակարդակով:

Մանկավարժական ուսումնական հաստա-
տություններն իրենց սովորողներին գյուղա-
կան տնտեսության դժով ոչ մի պատրաս-
տություն չեն տալիս. ժողովրդական կրթու-
թյան օրգաններն ուշադրություն չեն դարձ-
նում գյուղական տնտեսության դժով ուսու-
ցիչներին գիտելիքները բարձրացնելուն եվ
էքսկուրսիաներ չեն կազմակերպում դեպի
գյուղատնտեսական հիմնարկությունների
փորձնական դաշտերը, ցեղալին անասուն-
ների տնտեսությունները, բամբակագործա-
րանները, սելեկցիոն կայանները, առաջա-
վոր կոլիտոզները, սովխոզները և այլն:

1. Գյուղական ոչ-լրիվ միջնակարգ և միջ-
նակարգ դպրոցներում մտցնել պարտադիր
պրակտիկ պարապմունքներ և էքսկուրսիա-
ներ գյուղական տնտեսության դժով.

ա) 5-րդ դասարանում, բուսաբանության
դասավանդման կապակցությամբ, պրակտիկ
աշխատանքներ կատարել և փորձեր անց-
կացնել դպրոցամերձ հողամասում՝ սերմը և
հողը ցանքի համար նախապատրաստելու
ճպատակով, ուսումնասիրել սնման տար-
րեր տարածության աշխուժությունը բույսե-
րի զարգացման վրա, լրացուցիչ սնման,
լույսի, քարնանացման ազդեցությունը եվ
այլն: Երկրլթակավոր և միաբլթակավոր
բույսերի հետ ծանոթանալու հետ մեկտեղ
գործնականորեն ծանոթացնել բամբակի,
բրնձի և ուլունում առավել տարածված
կուլտուրական այլ բույսերի սերմերի հետ.

բ) 6-րդ դասարանում, բույսերի սինտե-
մատիկայի ուսումնասիրման կապակցու-
թյամբ, գործնական աշխատանքներ կատա-
րել բանջարանոցային, տեխնիկական (բամ-
բակ, թեյ և այլն), այդիների և գյուղատղն-
տեսական այլ կուլտուրաների աճեցման գր-

ծով, բույսերը, նրանց տեսակները ճանաչելու, հերքարացման գծով և այլն.

գ) 7-րդ դասարանում, կենդանաբանության դասավանդման կապակցությամբ, դպրոցամերձ հողամասում գործնական պարապմունքներ անցկացնել բամբակի վնասատուների և այլ բույսերի դեմ պայքարելու գծով, աշխատանք կատարել մատղաշին, թռչուններին, ճագարներին խնամելու գրծով, էքսկուրսիաներ կազմակերպել դեպի անասնաբուժական ֆերմաները, ձիաբուժական ֆերմաները, գրենաժային կայանները ևլ այլն.

դ) 8-րդ դասարանում, քիմիայի դասավանդման կապակցությամբ, գործնական պարապմունքներ անցկացնել պարարտանյութերի ուսումնասիրման գծով («Ազոտ» և «Փոսֆոր» ինժեայում). 9-րդ և 10-րդ դասարաններում աշակերտներին ծանոթացնել չոռի, բույսերի սունկային հիվանդությունների և գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու քիմիական միջոցների հետ.

ե) 9-րդ դասարանում, դարվինիզմի հիմքերի ուսումնասիրման կապակցությամբ, գործնական պարապմունքներ անցկացնել.

աշակերտներին ծանոթացնելով գյուղատնտեսական բույսերի սելեկցիայի տարրական հիմունքների հետ. էքսկուրսիաներ կազմակերպել դեպի ցեղային անասունների տրնտեսությունները և սելեկցիոն գյուղատնտեսական կայանները.

զ) ֆիզիկայի դասընթացում մեխանիկայի ընդհանուր օրենքներն իմանալու հիման վրա ապահովել գործնական ծանոթացումը գյուղատնտեսական մեքենաների կառուցվածքի սկզբունքների հետ, նույնպես և կոլխոզային էլեկտրակայանի կառուցվածքի հետ.

է) մաթեմատիկայի դասավանդման մեջ ապահովել, որպեսզի աշակերտները տարրական ծանոթացում ունենան տարածությունների և ծավալների չափման սլրիոմների հետ. ապահովել, որպեսզի աշակերտները կարողանան օգտվել համրիչներից, լուծել կոլխոզային հաշվառումից և կոլխոզային հաշվետարությունից վերցրած նյութի վրա կազմված խնդիրներ.

ը) գծագրության դասընթացի մեջ վարժություններ մտցնել կոլխոզային դաշտ, գծագրումներ, գյուղի, դպրոցամերձ հողա-

մասի, կոլխոզային ոչ բարդ կառույցների պլաններ կազմելու համար և այլն:

Վերեվ թվարկված բոլոր գործնական պարասպաններն ու էքսկուրսիաները պետք է անցկացվեն ռուսարանության, քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի և գրծադրության ուսումնասիրման կապակցությամբ, չխախտելով ծրագրի սխեմամայնությունը:

2. Գյրոցների դիրեկտորներն ամեն կերպ պետք է ծավալեն աշակերտների խմբակային արտադասարանական աշխատանքը գյուղական տնտեսության հարցերի շուրջը:

Գյուղական դպրոցների համար հանձնարարվում են հետևյալ խմբակները. գյուղական տնտեսության փորձագետների և պատանի նատուրալիստների խմբակ (երկրաբան - հողագետներ, բամբակաբուծության, բանջարաբուծության, այգեգործության, թռչնաբուծության, ճագարաբուծության, մատղաշի նկատմամբ շեֆության գծով և այլն կապված դպրոցների շրջապատի հետ). գյուղատնտեսական մեքենաների ու շարժիչների—տրակտորի, ավտոմոբիլի, կոմբայնի—ուսումնասիրման խմբակներ. կապավորների (ռազիտ, հեռագիր, հեռախոս), էլեկտրատեխնիկների, հիդրոտեխնիկների (լճակների,

գետակների և ուրիշ ջրամբարների ուսումնասիրման համար), տոպոգրաֆների ղեկավարների, օդերևութաբանների խմբակներ: Խմբակները ղեկավարելու համար, ուսուցիչների հետ միասին, ներդրավել հասարակայնության ուժերը—գյուղական տնտեսության առաջավորներին և փորձագետներին, խրճիթ-լաբորատորիաների աշխատողներին, ազրոնոմներին և գյուղական տնտեսության մյուս մասնագետներին:

3. Վերև թվարկված միջոցառումները հաջողությամբ իրագործելու համար կատարել հետևյալը.

ա) Լուսծովկամատի Գյրոցական վարչությունը և Գյրոցների ինստիտուտը պատանի նատուրալիստների կենտրոնական կայանի հետ միասին 1940 թ. հոկտեմբեր ամսի 2-րդ կեսին պետք է անցկացնեն հատուկ խորհրդակցություններ գյուղական ուլլիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի աշխատանքը բարելավելու հարցի շուրջը, հրավիրելով գյուղական դպրոցների լավագույն ուսուցիչներին, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտների, ԱզՑԱՆ-ի, Հողժողկոմատի և Աղբրեջանի ԼԿՄ կենտկոմի ներկայացուցիչներին.

բ) ՆախԱՍՍՈՒ կռժողկոմատը, ԼՂՍՍ Մարզժողկրթբաժնի վարիչը 1940-41 ուսումնական տարում պետք է ապահովեն վերոհիշյալ առարկաների, առաջին հերթին քուսարանության դասատուների, մանրագրնին հրահանգումը հատուկ խորհրդակցությունների միջոցով (մարզային, ուսումնական, փնջային), որոնց համար որպես ղեկավարներ ու ղեկուցողներ ներգրավել գյուղական տնտեսության բնագավառում առավել տրակավոր մասնագետներին:

Ուսուցիչներին գյուղական տնտեսության հետ ծանոթացնելու հարցերը մտցնել 5-10 դասարանների փնջային միավորումների եվ ուսյունական մանկավարժական կարիներանբրի աշխատանքի պլանի մեջ: Ռայ(քաղ)ժողկրթբաժինները պիտի կաշմակերպեն ուսուցիչների էքսկուրսիաներ ղեպի ուսյունի առաջավոր կոլխոզներն ու սովխոզները՝ գյուղական տնտեսության առաջավորների փորձն ուսումնասիրելու համար:

գ) ժողովրդական կրթության ուսյունական բաժինները բոլոր ոչ-լրիվ միջնակարգ եվ միջնակարգ դպրոցներին կից պետք է կազմակերպեն դպրոցամերձ հողամասեր (կես հեկտարի շափ), միջոցներ ձեռք առնել, որ

պեսզի այդ հողամասերը ցանկապատվեն, մաքրվեն, հավասարեցվեն, մասերի բաժանվեն. ձեռք բերել մանր խնվեհատք՝ դպրոցամերձ հողամասում աշխատելու համար, ապահովել հերկումը և տնկանյութեր մատակարարելը:

դ) դպրոցների դիրեկտորները մանկավարժական խորհրդերի հերթական նիստերում պետք է քննության առնեն աշակերտներին գյուղական տնտեսության հետ ծանոթացնելու աշխատանքի պլանները, դրանց մշակումը հանձնելով բուսաբանության, քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի և գծագրության դասատուներից բաղկացած հանձնաժողովին: Մանկավարժական խորհրդերի նիստերում մասնակից անել ծնողների ակտիվին և կոլխոզների ու գյուղատվեսների ղեկավար աշխատողներին:

ե) դպրոցների դիրեկտորները, կոմերիտական, պիոներական ու դպրոցական աշակերտական կազմակերպություններին ակտիվորեն պիտի մասնակից անեն աշակերտներին գյուղական տնտեսության հետ ծանոթացնելու աշխատանքի պլանի կատարմանը:

4. Պլանային, Բինըլուցետային վարչությունները և Տարրական ու միջնակարգ

դպրոցները Վարչութիւնը 1941 թվականի նախահաշվում պետք է միջոցներ նախատեսեն դպրոցամերձ հողամասում աշխատելու հնվենտար ձևք բերելու համար:

5. ՆախԱՍՍԻ կուսովումը, ԼԳՄ-ի Մարզժողկրթբաժնի վարիչը, ռայ(բաղ) ժողկրթբաժինների վարիչները և դպրոցների դիրեկտորները գյուղական դպրոցների ուսուցիչների ամառային արձակուրդիների կարգը պիտի սահմանեն այնպես, որ պետքի դպրոցամերձ հողամասում աշակերտների ամառային աշխատանքներն ապահովված լինեն որակավոր դեկավարութեամբ:

6. Ուսուցիչների պատրաստման Վարչութիւնը մինչև հոկտեմբերի 15-ը պետք է կուսժողկուստի կողմից առաջարկներ ներկայացնի՝ մանկավարժական և ուսուցչական ինստիտուտների ուսանողներին, նույնպես և մանկավարժական ուսումնարանների սովորողներին գյուղական տնտեսութեան հարցերի հետ ծանոթացնելու մասին:

Տարրական և միջնակարգ դպրոցի Վարչութիւնը մինչև 1941 թվականի հունվարի 1-ը պետք է մշակի ծրագրային ցուցումներ

մանկավարժական կարճատև դասընթացներում, որ անց են կացնում ուսուցիչների կատարելագործման ինստիտուտները, ուսուցիչներին գյուղական տնտեսութեան հարցերի հետ ծանոթացնելու համար:

7. «Մուհալիմ քյումազ» ժուռնալի խմբագրութիւնը և «Մուհալիմ գազեթի» խմբագրութիւնը պետք է ապահովեն մեթոդական և գիտական բնույթի հոդվածների զետեղումը՝ ուսուցիչներին գյուղական տնտեսութեան հետ ծանոթացնելու հարցերի վերաբերյալ և պարբերաբար լուսաբանեն գյուղական լավագույն ուսուցիչների փորձն այդ ասպարեզում:

8. Գյուղական դպրոցների դիրեկտորները պետք է դպրոցական գրադարաններն ապահովեն գյուղական տնտեսութեան վերաբերյալ գրականութեան մինիմումով՝ ուսուցիչների և աշակերտների համար: Խնդրել Ազգերենչրին՝ մեթոդական ձեռնարկներ հրատարակել դպրոցամերձ հողամասում աշխատելու, բուսաբանական կաբինետում գործնական պարամունքների տնտեսական մեջենաների մեթոդական ձեռնարկներ:

«Ազգային գրադարան»



NL0226188

935

9. ՆախԱՍՍՌ-ի Լուսավորության ժողովրդական Կոմիսարը, ԼՂԱՄ Մարզժողկրթբաժնի վարիչը և տալ(քաղ)ժողկրթբաժինների բոլոր վարիչները սույն հրամանը պետք է հասցնեն յուրաքանչյուր դիրեկտորին, ուսուցչին և ապահովեն նրա գործնական իրագործումը յուրաքանչյուր ոչ-լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցում:

10. Տարրական և միջնակարգ դպրոցների վարչությունը, ՆախԱՍՍՌ-ի Լուսավորության ԼՂԱՄ Մարզժողկրթբաժնի և բոլոր տալ(քաղ)ժողկրթբաժինների վարիչները պետք է սխտանատիկորեն վերահսկեն դպրոցի աշխատանքը գյուղական տնտեսության գծով:

ՀիՄՔ. — Ադրբեջանական ՍՍՌ Լուսավորության ժողովրդական Կոմիսարի կողմից 1940 թ. հոկտեմբերի 1-ի որոշումը:

Ադրբեջանական ՍՍՌ Լուսավորության ժողովրդական Կոմիսար՝ Մ. ՄԱՄԵՏՆՈՎ

О мероприятиях по улучшению работы сельской неполной средней и средней школы

П Р И К А З

Народного Комиссара просвещения азербайджанской ССР № 438 от 15 октября 1940 г.

